ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, հրավերովը Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծայր. վարդապետ Գրիգորյանի և տեղի համայնքային վարչությունների, հովվապետական այցելությամբ եղավ Վիեննայում, Մյունխենում, Մայնի Ֆրանկֆուրտում և Փարիզում, սույն թվականի ապրիլի 22-ից մինչև մայիսի 25-ը:

Այս ուղևորության ժամանակ Նորին Սրբությանը ուղեկցում էին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը և «Էջմիածին» ամսագրի քարտուղար Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը՝ որպես գավազանակիր:

Ապրիլի 22-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Վիեննայի օդակայան, որտեղ նրան ջերմորեն դիմավորեցին Տ. Մեսրոպ ծայր. վարդապետը, Վիեննայի հայոց եկեղեցական վարչության անդամներն ու ազգային այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև վիեննաբնակ բազմաթիվ հայ հավատացյալներ:

Օդակայանում Ամենայն Հայոց Հայրապետի ժամանումը անձամբ ջերմապես ողջունեց և բարի գալուստ մաղթեց Ավստրիո արքեպիսկոպոս Նորին Գերազանցություն կարդինալ Ֆրանց Քյոնիգը՝ ի գլուխ կաթոլիկ Եկեղեցու այլ ներկայացուցիչների:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, կարդինալ Ֆրանց Քյոնիգը և «Պրո-Օրիենտե» կազմակերպությունը «Պալավիչինի» պալատում կազմակերպեցին շքեղ ընդունելություն՝ ի պատիվ Հայոց Հայրապետի:

Ապրիլի 23-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Ավստրիո Հանրապետության նախագահ դոկտ. Ռուդոլֆ Կիրխշլեգերին:

Նույն օրը, ժամը 13-ին, կարդինալ Ֆրանց Քյոնիգը իր արքեպիսկոպոսարանում ճաշկերույթի հրավիրեց Հայոց Հայրապետին և Նրա շքախմբին:

Երեկոյան ժամը 19.30-ին Վեհափառ Հայրապետը, հրավերովը Աբբահայր Գրիգորիս վարդապետ Մանյանի, այցելեց Մխիթարյանների վանք և բաշխեց Իր օրհնությունները վանքի միաբանությանը և բոլոր ներկաներին:

Հետևյալ օրը, ապրիլի 24-ին, ժամը 13-ին, Ավստրիոյ արտաքին գործերի մինիստր դոկտ. Վիլլիբալդ Պահրը ընդունեց Հայոց Հայրապետին և Նրա պատվին տվեց ճաշկերույթ:

Երեկոյան ժամը 18-ին Վիեննայի հայոց Ս. Հռիփսիմե եկեղեցում տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն Ապրիլյան եղեռնի նահատակների հիշատակին, իսկ ժամը 19.30-ին՝ սգահանդես Վիեննայի «Պրելատեն Զալ» սրահում:

Ապրիլի 25-ին, երեկոյան ժամը 19.30-ին, Վեհափառ Հայրապետը նախագահեց Հ. Բ. Ը. Միության 75-ամյակի հոբելյանական հանդիսությանը:

Ապրիլի 26-ին, կիրակի օրը, Ս. Հռիփսիմե հայոց եկեղեցում ս. պատարագ մատուցեց և քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ հոգեպես մխիթարելով խուռներամ հայ հավատացյալ ժողովրդին:

Երեկոյան Վիեննայի Ս. Ստեփանոս Մայր տաճարում, բազմահազար ժողովրդի ներկայության, մատուցվեց ս. պատարագ: Պատարագեց տաճարի ավագերեց Յախիմ սրբազան եպիսկոպոսը: Քարոզեց Վեհափառ Հայրապետը գերմաներեն լեզվով:

Ապրիլի 27-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին, Ավստրիոյ մշակույթի և կրթության մինիստր դոկտ. Սինովացը ընդունելություն կազմակերպեց ի պատիվ Հայոց Հայրապետի:

Նույն օրը, ժամը 11-ին, Հայոց Հայրապետը Իր շքախմբով այցելություն տվեց Ավստրիայում Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան պրն. Եֆրեմովին:

Ապրիլի 29-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 12-ին, Հայոց Հայրապետը այցելություն տվեց Ավստրիոյ ակադեմիայի պրեզիդենտ պրոֆ., դոկտ. Հունգերին:

Մայիսի 1-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Մյունխեն: Օդակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյանը, Բավարիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Հակոբ վարդապետ Գալընճյանը, համայնքային վարչության անդամներ և մյունխենաբնակ բազմաթիվ հայեր:

Հայոց Հայրապետի ժամանումը ջերմապես ողջունեցին Մյունխենի արքեպիսկոպոս կարդինալ Ժոզեֆ Ռացինգերը և լութերական Եկեղեցու պետ եպիսկոպոս դոկտ. Հանզելմանը՝ իրենց հետևորդներով:

Ինչպես Մյունխենում, այնպես էլ Ֆրանկֆուրտում Վեհափառ Հայրապետին մշտապես ուղեկցում էր Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծայր. վարդապետ Գրիգորյանը:

Մայիսի 2-ին, շաբաթ օրը, ժամը 11.30-ին, Մյունխենի արքեպիսկոպոսարանում կարդինալ Ժոզեֆ Ռացինգերը կազմակերպեց հանդիսավոր ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի:

Մայիսի 3-ին, կիրակի օրը, ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Մյունխենի Ս. Թեատինյան տաճարում՝ մխիթարելով բազմահարյուր հայ հավատացյալներին: Ապա Նորին Սրբությունը նախագահեց Իր պատվին կազմակերպված համայնքային ճաշկերույթին և տվեց Իր պատգամն ու օրհնությունը ներկա ժողովրդին:

Հետևյալ օրը, երկուշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Բավարիայի վարչապետարան, որտեղ ընդունելություն կազմակերպեց վարչապետի տեղակալ և արդարադատության մինիստր դոկտ. Հիլլերմայերը:

Նույն օրը, ժամը 18.30-ին, Հայոց Հայրապետը, Մյունխենի լութերական Եկեղեցու եպիսկոպոս դոկտ. Հանզելմանի հրավերով, Ս. Հարության տաճարում ներկա եղավ երեկոյան հատուկ ժամերգությանը և քարոզեց քրիստոնեական եղբայրության և սիրո մասին:

Մայիսի 5-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը մեկնեց Ֆրանկֆուրտ, ուր խանդավառորեն դիմավորվեց եկեղեցական վարչության անդամների, տեղի քույր Եկեղեցիների ներկայացուցիչների և խուռներամ հայ հավատացյալների կողմից:

Մայիսի 6-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը, Հեսսենի նահանգի լութերական Եկեղեցու պետ դոկտ. Հիլդի հրավերով, այցելեց տեղի լութերական «Քրիստ» եկեղեցին, որտեղ տեղի ունեցավ էկումենիկ աղոթք, և ապա, ժամը 15-ին, Իր պատվին կազմակերպված ընդունելությանը՝ լութերական Եկեղեցու արտաքին հարաբերությունների կենտրոնում:

Մայիսի 7-ին, Մայնի Ֆրանկֆուրտի քաղաքապետարանում Հայոց Հայրապետի այցելությունը ընդունեց փոխքաղաքապետ և ֆինանսների մինիստր դոկտ. Գերհարդը:

Երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետի մեկնման առիթով, Ֆրանկֆուրտի համայնքային վարչությունը կազմակերպեց հրաժեշտի ընդունելություն, որտեղ Հայոց Հայրապետը տվեց Իր պատգամն ու օրհնությունը:

Մայիսի 8-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը, կեսօրից հետո, ժամանեց Փարիզ: Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպիսկոպոսը, նրա փոխանորդ Տ. Գյուտ եպիսկոպոսը, հոգևորականության, կրոնական ընկերակցության ներկայացուցիչները, Մայր եկեղեցու հոգաբարձության անդամները, մամուլի ներկայացուցիչներ և բազմաթիվ հավատացյալներ:

Օրլիի օդակայանում, հանուն ֆրանսիական կառավարության, Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության պրոտոկոլի ներկայացուցիչ պրն. Լոմոնիեն:

Մայիսի 9-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Փարիզի «Ինտերկոնտինենտալ» հյուրանոցի սրահում, Հայոց Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Հ. Բ. Ը. Միության հիմնադրման 75-ամյակին նվիրված մեծ հանդիսությունը, ուր ներկա էին Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ տիար Ալեք Մանուկյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, և բազմաթիվ երկրներից Փարիզ ժամանած Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղերի պատվիրակություններ և մեծ թվով ֆրանսահայ ազգային գործիչներ ու մտավորականներ: Հոբելյանի առթիվ խոսք առավ տիար Ալեք Մանուկյանը, և հանդիսության վերջում օրհնության խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, ժամը 14.30-ին, Հ. Բ. Ը. Միության Ֆրանսիայի մասնաճյուղի նախագահ տիար Նապոլեոն Պուլլուքյանը կազմակերպեց ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Մայիսի 11-ին, կիրակի օրը, ժամը 10.30-ին, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ս. պատարագ մատուցվեց և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 17-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը Ալֆորվիլի հայոց

եկեղեցում ներկա եղավ ս. պատարագին և Իր պատվին կազմակերպված ճաշկերույթին՝ բաշխելով Իր օրհնությունները ներկա ժողովրդին:

Մայիսի 22-ին, ուրբաթ օրը, Հայոց Հայրապետը այցելություն տվեց Ֆրանսիայում Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան պրն. Ստեֆան Չերվոնենկոյին:

Հետևյալ օրը Փարիզի հայ մտավորականների պանթեոնում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ մասնավոր հոգեհանգիստ՝ ի հիշատակ հանգուցյալ ֆրանսահայ մտավորականների:

Մայիսի 24-ին, կիրակի օրը, առավոտյան, Փարիզի հայոց եկեղեցում Վեհափառ Հայրապետը ներկա եղավ ս. պատարագի արարողությանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց՝ ոգեկոչելով հիշատակը Սարդարապատի հերոսամարտում զոհված հայ մարտիկների:

Հաջորդ օրը, մայիսի 25-ին, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մոսկվա, ուր տեղի հայոց Ս. Հարություն եկեղեցում ժամերգության վերջում ողջունեց հայ հավատացյալների բազմությանը և խոսեց արտասահմանյան Իր ուղևորության տպավորությունների մասին:

Հունիսի 1-ին, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի հրավերով, Վեհափառ Հայրապետը մեկնեց Զագորսկի վանք՝ մասնակցելու ռուսաց Պատրիարքի գահակալության տասներորդ տարեդարձի հանդիսությանը և այդ առթիվ նույն վանքում՝ խաղաղության պաշտպանությանը նվիրված կոնֆերանսին, որին մասնակցում էին Սովետական Միությունում գործող քրիստոնեական Եկեղեցիների և կրոնական այլադավան կազմակերպությունների պետերը:

Հունիսի 2-ին, երեքշաբթի օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ, Սուրբ Էջմիածին:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. Էջմիածին,
15 հունիսի 1981 թ.